2427
327/2
2313
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ПЕЧАТЬ АЗIАТСКАГО МУЗЕУМА 1818
MUS. ASIAT. C. A. 1818
243
Դ-21

# ԴԱՍԱՏԵՏՐ ԱՂՕԹԻՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

## *ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ*

---

*Հրատարակեց*

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԵՉԵԱՆՑ**

*ՄՈՍԿՈՒԱ*
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
**1894**
(69)

243
Դ-21

# ԴԱՍԱՏԵՏՐ ԱՂՕԹԻՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

## ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

243
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

*Հրատարակեց*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԵՉԵԱՆՑ

В 7001

ՄՈՍԿՈՒԱ
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.Ի.
1894
(69)

2010

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 28 марта 1894 г.

50478-ահ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

36232-66

Типогр. Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ.

**ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՄԱՐԻԱՄՈՒ**

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏԻՑ.

✝

**ВЪ ПАМЯТЬ**

# НЕЗАБВЕННЫХЪ РОДИТЕЛЕЙ

# ГРИГОРІЯ и МАРІИ

*Отъ признательнаго сына.*

*Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ,*
*լուաւ Տէր աղօթից իմոց և Տէր*
*զխնդրուածս իմ ընկալաւ:*

**Դաւիթ մարգ.**

---

*Услышалъ Господь гласъ плача моего, внялъ Господь мольбамъ моимъ и воспріялъ прошенія мои.*

*Давидъ пр.*

## ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ.

*Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն։*

* * *

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ.

*Անկանիմք առաջի քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ բարեխօսեա՛*

վասն անձանց մերոց. և աղաչեմ զմիածին որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

* * *

Ընկալ Տէր զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո. և որոց այսօր է յիշատակ։ Լո՛ւր մեզ, Տէր և ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ԱՂՕԹՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ.

Ի մէջ տաճարիս և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք. ըզսուրբ և զհրաշալի և զյաղթող տէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ



մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* * *

## ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ.

Ամենակալ Աստուած՝ որ ծագեցեր զլոյս առաւօտու յարարածս քո, ծագեա և այժմ զառատ ողորմութիւն ի վերայ փառաբանչացս անուանդ քո սրբոյ։

* * *

Լուսովդ քով Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք, և ի սուրբ խաչ քո Փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք. լո՛ւր մեզ Աստուած Փրկիչ մեր, տո՛ւր մեզ զխաղաղութիւն քո, և արա՛ առ մեզ զողորմութիւն քո, մարդասէր Տէր։

* * *

## ԱՂՕԹՔ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՃԱՇ.

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, Տէր, և դու տաս կերակուր նոցա ի ժամու: Աղաչեմք զքեզ պարգևեա մեզ կերակուր ուրախութեան, և լցո զսիրտս մեր ի լիութենէ արարածոց քոց:

*
* *

## ԱՂՕԹՔ ՅԵՏ ՃԱՇՈՒ.

Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ լցուցանող Քրիստոս, գոհանամք զքէն, որ կերակրեցեր զմեզ քաղցրութեամբ կամօք քովք. լցո ուրախութեամբ և բերկրութեամբ զսիրտս մեր. ամէն:

*
* *

## ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ.

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն



ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր, որպէս զի յամենայն ժամ քև պահպանեալ լիցուք զօրհնութիւն և զփառս՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*
* *

Յիշեա, Տէր, զպաշտօնեայս քո, զծնողսն մեր, զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս և որք պատուիրեցին մեզ հաւատով:

*
* *

## ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ.

ա) Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:

բ) Մի՛ արասցես քեզ կուռս։

գ) Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց։

դ) Յիշեա՛ սրբել զօր շաբաթուն, այսինքն ըզկիւրակէս։

ե) Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի։

զ) Մի՛ սպանաներ։

է) Մի՛ շնար։

ը) Մի՛ գողանար։

թ) Մի՛ սուտ վկայեր։

ժ) Մի՛ ցանկար տան ընկերի քո, և մի՛ ամենայնի, որ նորա իցեն։

* * *

## ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻ.

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ թագաւորն և զկայսրն ամենայն Ռուսաց զԱլէքսանդր Ալէքսանդրովիչն. զօրացո՛ զնա, օգ-



նեա զաւակաց և զօրաց Նորա, պահելով զամենեսին ի խաղաղութեան։

Թագաւոր յուսացաւ ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի. ամէն։

* * *

## ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ.

Հաւատամք ի մի Աստուած՝ Հայր ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ, և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն սրբով։ Որով էառ

մարմին, հոգի և միտք, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց. յարքայութիւն երկնից, և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ



զսուրբ Հոգին. և թէ՝ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* * *

## ՍԱՂՄՈՍ Ծ.

Ողորմեա ինձ, Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթեսցես ի դատելն քո։

Անօրէնութեամբ յղացայ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ, և սուրբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի՛ ընկեներ զիս, Տէր, յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան. և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին։



Փրկեա՛ զիս յարենէ Աստուած՝ Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարե՛ արա, Տէր, կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

36232-64

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

* * *

## ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ.

Տէ՛ր ամենակալ, Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ։



ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна

Որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն զարդ նոցա. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո, և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննելի են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Դու Տէր բարձրեալ՝ գթած, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Դու Աստուած, ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոյն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մե-



ղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Կորացեալ եմ ես ի բնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Բարձրացուցի զսրտմտութիւն, և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումն. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Եւ արդ՝ Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Մեղայ Տէր՝ մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն. թո՛ղ ինձ, Տէր, թո՛ղ ինձ, և մի՛ կորուսաներ զիս ընդ անօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, Տէր, և մի՛

յիշեր զչարիսն իմ, և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ներքոյ երկրի չարեօք. ամենակա՛լ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո, զի անարժան եմ. ամենակա՛լ Տէր, թո՛ղ ըզմեղս իմ:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում, և ես օրհնեցից զքեզ զամենայն զաւուրս կենաց իմոց. ամենակա՛լ Տէր, թո՛ղ ըզմեղս իմ:

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զաւարթունք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն:

* * *

## ՄԱՂԹԱՆՔ
## ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ.

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր՝ զխառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ առ պատկառելոյս զխմօք. փարատեա ամենա-



պարգև՝ զամօթական ախտութիւնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային՝ զմոլեգին մառախուղ. կընքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զմբռնողին չար զամունս. խորտակեա անքննելի՝ զմարտողին զիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո նշանդ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ զհանգատեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կայուսցես շըրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի զիմի ընդ դէմ զիւացն զասու: Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնիդ՝ և ամենայն

ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խոլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անմխասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ՝ հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* * *

## ԱՂՕԹՔ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ.

1) Հաւատով խոստովանիմ և երկրպագանեմ քեզ, Հայր և Որդի և Սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և



մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

2) Հաւատով խոստովանիմ և երկրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ի հաճոյս, և ընդունել ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

3) Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

4) Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր.

մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

5) Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով, որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

6) Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

7) Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

8) Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:



9) Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ ևս հայել յաւարա, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ ո՛չ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց ո՛չ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

10) Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ ըզխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

11) Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց՝ ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

12) Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի՛ թողուր ինձ ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեխնամաց. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

13) Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

14) Խնամօղ արարածոց, պահեա նշանաւ խաչի քոյ զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց զիւաց, և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

15) Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո



հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի նստել 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

16) Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնել զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

17) Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. և բևեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն՝ և զերկիւղ գեհենոյն՝ և զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

18) Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ո-

ղորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

19) Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով՝ և բարի գործով և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբն դառնալ առ քեզ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

20) Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են ի ներքոյ երկնից. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

21) Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչմանէ աւուրն. և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քոյ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

22) Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկ-



նից արքայութիւնդ. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

23) Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ յիս յանցանաց, և դարձո՛ զնոսա ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. և ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

24) Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփանոսի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*
* *

## МОЛИТВА НЕРСЕСА БЛАГОДАТНАГО.

1) Съ вѣрою исповѣдую и поклоняюсь Тебѣ, Отецъ, Сынъ и Духъ Святой, несозданное и безсмертное Естество, Творецъ Ангеловъ и человѣка, и всего существующаго. Помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

2) Съ вѣрою исповѣдую и поклоняюсь Тебѣ, нераздѣльный Свѣтъ, единосущная святая Троица, въ одномъ Божествѣ, Создатель свѣта и Прогонитель тьмы! прогони отъ моей души тьму грѣховъ и невѣжества, и просвѣти мою мысль въ этотъ самый часъ, чтобы молитва моя къ Тебѣ была Тебѣ благоугодна; прими мои прошенія. Помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

3) Небесный Отецъ, истинный Богъ! Ты для возвращенія къ Себѣ заблудившейся овцы послалъ Своего возлюбленнаго Сына! Согрѣшилъ я на небо и предъ Тобою; прими мои моленья, какъ нѣкогда блуднаго сына; одѣнь меня тою первою одеждою, которую совлекъ съ меня грѣхъ. И помилуй Свое творенье и меня многогрѣшнаго.

4) Сынъ Божій, истинный Богъ! Ты изшелъ изъ нѣдръ Отца, и для нашего искупленія принялъ плоть отъ святой Дѣвы Маріи, былъ распятъ,



погребенъ и воскресъ изъ мертвыхъ, и снова вошелъ къ Отцу! Согрѣшилъ я на небо и предъ Тобою! помяни меня, какъ нѣкогда разбойника, когда явишься въ Своемъ царствѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

5) Духъ Божій, истинный Богъ! Ты нисшелъ на Іорданъ, и на Горницу, и просвѣтилъ меня купелію святаго крещенія! согрѣшилъ я на небо и предъ Тобою! Очисти меня снова Своимъ Божественнымъ огнемъ, какъ нѣкогда просвѣтилъ Апостоловъ Твоихъ огненными языками. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

6) Несозданное Естество! согрѣшилъ я предъ Табой сердцемъ, душею и тѣломъ, предай забвенію мои грѣхи ради Своего святаго имени. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

7) Всевидящій! согрѣшилъ я предъ Тобою мыслію, словомъ и дѣломъ! уничтожъ рукописаніе грѣховъ моихъ, и напиши мое имя въ книгѣ жизни. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

8) Тайновѣдецъ! согрѣшилъ я предъ Тобой по волѣ и по неволѣ, съ сознаніемъ и безъ сознанія! прости меня такого грѣшника, который отъ купели крещенія и до сего дня грѣшилъ предъ

Твоимъ Божествомъ всѣми чувствами и всѣми членами своего тѣла. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

9) Господь Всехранитель! святый страхъ Твой поставь стражею предъ моими глазами, пусть они не смотрятъ съ вожделѣніемъ; предъ моими ушами, пусть они не слушаютъ съ удовольствіемъ беззаконныхъ рѣчей; предъ моими устами, пусть они не говорятъ лжи; предъ моимъ сердцемъ, пусть оно не замышляетъ законопреступленій; предъ моими руками, пусть они не творятъ неправды; предъ моими ногами, пусть они не ходятъ по беззаконному пути; но напротивъ направи теченіе ихъ на путь всѣхъ заповѣдей Твоихъ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

10) Христосъ. Огнь животворящій! огнь Твоей любви, пролитый Тобою на землю, воспламени въ моей душѣ, пусть онъ незребитъ болѣзни моего духа, освѣтитъ мою совѣсть, очиститъ отъ грѣховъ мое тѣло, зазжетъ въ моемъ сердцѣ свѣтъ познанія о Тебѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

11) Іисусъ премудрость Отца! умудри меня такъ, чтобъ я и мыслилъ и говорилъ и дѣлалъ предъ Тобою добро во всякое время; сохрани меня отъ



помышленій словъ и дѣлъ худыхъ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

12) Добролюбивый, всеуправляющій Господь! Не попусти мнѣ увлекаться склонностями души моей; напротивъ управляй мною такъ, чтобы я всегда жилъ по Твоей благой волѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

13) Царь небесный! причасти меня Своего царства, которое Ты обѣщалъ Своимъ возлюбленнымъ; укрѣпи мое сердце, пусть оно возненавидитъ грѣхъ, и возлюбитъ Тебя одного, поступая по Твоей волѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

14) Промыслитель Своего созданія! Знаменіемъ креста Твоего храни мой духъ и тѣло отъ прелестей грѣховныхъ, отъ демонскаго искушенія, отъ злыхъ людей, и отъ всѣхъ опасностей душевныхъ и тѣлесныхъ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

15) Христосъ, хранитель всѣхъ! поддерживай меня крѣпостію Своей десницы день и ночь, сижу-ли я дома, нахожусь-ли въ пути, сплю-ли или бодрствую, чтобъ мнѣ когда нибудь не пасть. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

16) Боже мой! Ты отверзаешь Свою руку, и вся

тварь довольна Твоимъ милосердіемъ! Тебѣ препоручаю мою душу! храни ее, не оставляя меня въ моихъ нуждахъ душевныхъ и тѣлесныхъ отъ сего самаго часа на всегда. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

17) Исправитель заблуждающихъ! обрати меня отъ нечестивой жизни къ благочестію и напечатлѣй въ моемъ умѣ страшный часъ смерти, страхъ къ преисподней и любовь къ Небесному Царству, и я раскаюсь во грѣхахъ своихъ, и буду жить по правдѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

18) Источникъ безсмертія! вызови изъ моего сердца слезы истинно покаянныя, какъ нѣкогда у грѣшницы, и я омою нечистоту моей души, прежде чѣмъ выйду изъ этого міра. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

19) Милосердый Господь! допусти меня переселиться къ Тебѣ въ православной вѣрѣ, съ благими дѣлами и съ пріобщеніемъ святаго тѣла и крови Твоей. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

20) Благодѣтель Господь! препоручи меня вѣрному Ангелу хранителю, пусть онъ съ миромъ сохранитъ душу мою, и поможетъ мнѣ перейти



козни воздушныхъ демоновъ, оставшись цѣлымъ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

21) Христосъ, истинный свѣтъ! удостой мою душу увидѣть съ радостію свѣтъ Твоей славы, когда Ты въ назначенный день обратишься ко мнѣ съ Своимъ словомъ, и пусть она успокоится въ надеждѣ благочестивыхъ на ложахъ праведныхъ, даже до дня великаго Твоего пришествія. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

22) Праведный Судія! когда Ты придешь судить живыхъ и мертвыхъ, во славѣ Своего Отца, не суди Твоего раба; но избавь меня отъ вѣчнаго огня, и дай мнѣ услышать блаженный гласъ праведныхъ въ небесномъ Царствѣ. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

23) Премилосердный Господь! помилуй всѣхъ вѣрующихъ въ Тебя родныхъ моихъ, и чужихъ, знаемыхъ и незнаемыхъ, живыхъ и мертвыхъ; прости грѣхи моимъ врагамъ и ненавидящимъ Тебя, и обрати ихъ отъ недоброжелательства, которое они питаютъ ко мнѣ, пусть они будутъ достойны Твоего милосердія. И помилуй Свое творенье, и меня многогрѣшнаго.

24) Господь свѣтящаяся слава! услыши молитву Твоего раба! и милостиво прими мои прошенія

при предстательствѣ святой Твоей Матери, Крестителя Іоанна, святаго Стефана Первомученика, святаго Просвѣтителя нашего Григорія, святыхъ Апостоловъ, Пророковъ, святыхъ Учителей, Мучениковъ, святыхъ Патріарховъ, Пустынножителей, благоугодившихъ Тебѣ Дѣвъ, и всѣхъ святыхъ Твоихъ на небѣ и на землѣ.

А Тебѣ, Святая нераздѣльная Троица, да будетъ слава и поклоненіе вовѣки вѣковъ. Аминь.

*
* *

## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ.

*Հրաժարիմք ի սատանայէ՝ և յամենայն խաբէութենէ նորա. ՚ի պատրանաց նորա. ՚ի խորհրդոց նորա. ՚ի գնացից նորա. ՚ի չար կամաց նորա. ՚ի չար հրեշտակաց նորա. ՚ի չար պաշտօնէից նորա. ՚ի չար կամարարաց նորա. և յամենայն զօրութենէ նորա. հրաժարելով հրաժարիմք:*

*
* *



## ԶՂՋՈՒՄՆ.

*Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և սրբուհւոյ Աստուածածնին՝ և առաջի քո, հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ: Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա. մտօքս և շարժմամբ սորա. մարմնովս և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ, մեղայ Աստուծոյ: Այլև մեղայ եօթնեկին յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ՝ և մասամբք նորին. նախանձու՝ և մասամբք նորին. բարկութեամբ՝ և մասամբք նորին. ծուլութեամբ՝ և*

մասամբք նորին. ագահութեամբ՝ և մասամբք նորին. որկրամոլութեամբ՝ և մասամբք նորին. բղջախոհութեամբ՝ և մասամբք նորին, մեղայ Աստուծոյ։ Այլև մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ. յանձնառելեացն և հրաժարելեացն. զի ոչ զյանձնառականսն կատարեցի, և ոչ 'ի հրաժարելեացն հեռացայ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեզգացայ. 'ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ կորացայ, և բարեաց գործոց ես ինձէն հեռացայ։ Վա՜յ ինձ, վա՜յ ինձ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի են անօրէնութիւնք իմ. աններելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ, մեղայ Աստուծոյ։ Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս 'ի կապից մեղաց իմոց. աղաչեմ զքեզ։

* * *



## ԱՐՁԱԿՈՒՄՆ.

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացելոցն և մոռացելոցն։

* * *

## ОТРЕЧЕНІЕ.

Отрекаемся отъ сатаны и всякаго обмана его, отъ обольщеній его, отъ помысловъ его, отъ путей его, отъ злой воли его, отъ злыхъ духовъ его, отъ злыхъ служителей его, отъ злыхъ угодниковъ его, и отъ всякой злой силы его отрекаемся и отступаемъ (повторяется три раза).

* * *

## ПОКАЯНІЕ.

Согрѣшилъ я предъ всесвятою Троицею, Отцемъ, Сыномъ и Святымъ Духомъ. Согрѣшилъ я предъ Богомъ: исповѣдую предъ Богомъ и Пре-

чистою Богородицей и предъ тобою, отецъ святой, всѣ грѣхи, мною совершенные. Вѣдь согрѣшилъ я помысломъ, словомъ и дѣломъ, волею и неволею, сознования и не сознования. Каюсь Богу.

Согрѣшилъ я душею и силою ея, разсудкомъ и дѣйствіемъ его, тѣломъ и чувствами его. Согрѣшилъ я силою души моей: коварствомъ, дерзостью, нескромностью и робостью, расточительностью и скупостью, распутствомъ, обидою, склонностью ко злу, отчаяніемъ и легкомысліемъ. Каюсь Богу.

Согрѣшилъ я семью смертными грѣхами: гордостью и частями ея, завистью и частями ея, гнѣвомъ и частями ея, лѣностью и частями ея, алчностью и частями ея, чреволюбіемъ и частями его, сладострастіемъ и частями его. Каюсь Богу.

Сверхъ того согрѣшилъ я противъ всѣхъ Божіихъ Заповѣдей, тѣхъ, которыя повелѣваютъ исполнять обязанности и тѣхъ, которыя воспрещаютъ что либо. Такъ какъ я не исполнилъ тѣхъ, которыя добровольно приняты мною къ исполненію и не отрекся отъ всего того, отъ чего долженъ былъ я отречься; принялъ я законы и уклонился отъ нихъ; вступилъ въ число Христіанъ, и дѣлами своими оказался недостойнымъ этого имени; зная зло, я добровольно предавался ему и отъ



добрыхъ дѣлъ удалялся по собственному убѣжденію. Увы, горе мнѣ, всего мнѣ не перечислить, всего мнѣ не исповѣдать: грѣхи мои безчисленны, злодѣянія мои неизрѣчимы, непростительны мои прогрѣшенія, неизлѣчимы раны мои. Каюсь Богу.

Отче Святый! тебя я имѣю посредникомъ примиренія и ходатаемъ предъ единороднымъ Сыномъ Божіимъ. Освободи меня, данною тебѣ властью, отъ грѣховъ моихъ, умоляю тебя.

*
* *

## ОТПУЩЕНІЕ.

Да помилуетъ тебя человѣколюбивый Богъ, и даруетъ прощеніе и отпущеніе всѣхъ грѣховъ твоихъ, исповѣданныхъ и забытыхъ. И я по своему священническому сану и по священнической власти и по Божьему повелѣнію: что вы свяжете на землѣ, то будетъ связано на небѣ, и что разрѣшите на землѣ, то будетъ разрѣшено на небѣ (Матѳ. 18, 18), основываясь на тѣхъ словахъ, отпускаю тебя отъ всякаго участія въ грѣхахъ твоихъ, совершенныхъ мыслями, словомъ и дѣломъ

во имя Отца и Сына и Святаго Духа. Притомъ предаю тебя Таинствамъ Святой Церкви, дабы всѣ добрыя дѣла твои сочтены были за добродѣтели и служили бы тебѣ во славу въ будущей жизни. Аминь.

ՎԱԽՃԱՆ.

ՊԵՏ ԿՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

2427

ՀՀ Ազգային գրադարան
NL0029293

ИВ 154

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

2361